ՊԱՐԶԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆԴԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՎԵՑԱՄՍԵԱՑ

Ա · ՏԱՐԻ · Ա · ՀՐԱՏ · 1862 · ԹԻՒ 12 · ՅՈՒԼԻՍ 20

Հրատարակի ամիսը երկու անգամ.

Վեցամսեայ գինն է 8 ֆրանգ.

Իրմիրեն դուրս ճամբու ծախքը միատեղ 9 ֆրանգ.

Սպորագրութիւնները հրճանին սկիզբեն կրնկսին.

Հանդէսիս ուղղուած անձնական նամակ կամ ծրար չընդունուիր.

Սպորագրութեան տեղերն են.

Իզմիր՝ Դաշիկի գրասենեակը, Կիլիմ Խան, թիւ 3.

Կ Պոլիս, մեծարգոյ Խ. Թ. Գաշեանտերեանին սենեակը Պաշբ դռնցար կամուրջին գլուխը.

Հաշեղ, մեծարգոյ Յ. Ս. Գիւրբզեանոֆ.

Փարիզ, M. A. Mourad, Rue du Dragon, 26.

Մանչեսթեր, D. Ekisle r, George Street, 78.

ԱՂԳԱՅԻՆ

ՀԻՆԵՐՐ. ԵՒ ՆՈՐԵՐՐ.

Հնորհիւ Օսմանեան բարեխնամ Պետութեան Հայ ազգին Ներերը այսինքն լուսաւորեալ կամ լուսաւորուիլ փափաքող մասը՝ շատ ջանքերէ, շատ աշխատութենէ և մատնութեան, նենգութեան, քսութեան, զրպարտութեան, հակառակութեան, վերջապէս բռնութեան և ադիտութեան հնարած մեքենաներուն արիաբար յաղթելէ ետք՝ սքանչելի Կանոնագրութեան մը (Ազգային ազատարար Սահմանագրութեան ըսել կուզեմ) անկործանելի և հաստատուն կոթողը տնկեցին մեծաւ ցնծութեամբ։

Ներերը՝ անդիմադրելի աշխատութեամբ և դովելի եռանդով կը փութան Ազգային ընդհանուր Յառաջադիմութեան համար տիւաք եղած հնարներ և միջոցներ գտնել և զանոնք գործադրելու հոգ ունենալ։ Ազգային հնացեալ և վնասաբեր վերքերը բուժելու համար ամեն կերպ ջանքեր և անձնանուիրութիւններ ընելու յանձնառու կը լինին։ Ազգային անձառնի սովորութիւնները, ծաղրելի նախապաշարումները, ազգավնաս աւելորդապաշտութիւնները և հին ատենէ մնացած մոլութիւնները ջնջելու և անոնց տեղ դեղեցիկ և վայելուչ սովորութիւններ, գովելի և հնորհալի ձևեր և Յառաջադիմութեան բաղձանք ունեցող Ազգի մը պէտք եղած և վայլած բարեմասնութիւններ Ազգին մէջ տարածելով զանոնք արմատացընելու փոյթ ունին։

Ազգը՝ իւր հիմակուան սոսկալի վիճակին հասած է հին ժամանակէ 'ի վեր մինչև ցայժմ տեղի ունեցած անկոգոլիան և անպարբերոլիան պատճառաւ։ Ներերը ահա Ազգի մը նկատմամբ ասոնց սոսկալի իրեր լինելը ճանչնալով՝ անոնց առջևն առնելու համար աշխատութիւններ չեն խնայեր։ Այն այս ազգավնաս և մեր Ազգին մէջ դրեթէ արմատացեալ ախտերը բոլորովին հեռացընելու կաշխատին թէ խօսքով և թէ 'ի պահանջել հարկին գործքով։

Ազգին շահը, վնասը, ծախքը, մուտքը, առնելիքը, տալիքը կուզեն գիտնալ, որովհետև Ազգին անհատներէն լինելով՝ Ազգային ամեն ըս-

տայուածոց վերայ անհատական իրաւունքներ ունին։

Ասոնք, ինչպէս իրենց իրաւունքը, նոյնպէս նաև իրենց պարտաւորութիւնը կը ճանչնան Հիւրէն լաւ և ոչ թէ անոնց պէս կուրօրէն. իրենց անհատական պարտքերը անթերի կատարելը՝ իրենց սուվորութիւն և նուիրական պարտաւորութիւն ըրած են։

Այն ցանկալի Սահմանադրութիւնը սիրով և ջերմ եռանդով իրենց կուրծքերուն վերայ սեղմած են և բան մի կարող պիտի չըլլնի զայն իրենց ձեռքէն յափշտակելու, առանց սրտերնին և հոգինին միատեղ առնելու.... Հանգի իրենց հոգիին պէս կը սիրեն զՍահմանադրութիւնը և պարտաւոր են սիրելու, քանզի լաւ համոզուած են անոր օգտակար, կարևոր և Հայ Ազգին այժմեան վիճակին համար խիստ անհրաժեշտ լինելուն։

Իսկ Հիւրը, այսինքն խաւարեալ կամ հին դրութեամբ վարուիլ ուզող մասը, միշտ Ազգերու ազդաչէն գործերուն հակառակ մտածելէն և անոնց ամէն տեսակ մտածութեանցը հակառակ լինել փափաքելէն ուրիշ բան չունին։

Հիւրը կըսեն "Մենք մեր Նախնեացմէ մեզի ուանդուածներուն ուանդապահ լինել, անոնցմէ ինչ որ տեսանք՝ այն ընել և ինչ որ գտանք՝ այնպէս գործել միայն պարտաւոր ենք. Սահմանադրութիւն, կարգ, կանոն, օրէնք և այլն ինչ որ Ազգերը հնարած են, մեզի ընդունելի չէ, որովհետև մեր Նախնիքներէն մնացած չէ. միթէ մեր Նախնիքը զանոնք չունեցած՝ չէին կարող ապրիլ. միթէ անոնց վերայ է Ազգութեան հիմը, միթէ նախնիք Ազգ չէին, և այլն"։ Տրամաբանութեան և Բնութեան օրինաց ներհակ իմաստակութեամբ կը ջանան իրենք զիրենք համոզել և մինչև անգամ զԱզգերն՝ իրենց խեղճ և կայր գըրութեան հետևելու յորդորել. չգիտնալով արդի լուսաւորեալ Աշխարհին (Դուրսպա) Լուսաւորութեան համար օրչափ և օրչափ օգտակար բաներ հնարելը, և հին ատենէ մնացած անձնոնի անհեթեթութիւնները արմատաքի խլելը....։

Ի՞նչպէս անուանենք այսպիսիները... թող ողջախոհ ընթերցողը գտնէ յարմար անուն մի ասոնց....։

Ասոնք՝ ընդհանուր Ազգին օգտին ծառայող նուիրական Սահմանադրութիւնը նախատելով՝ շատ առնակ վատութիւններու և Լոյսերեան խորամանկութիւններու դիմելով հին դրութիւնը նորէն կանգնելու և Ազգերու պատուական Դրութիւնը հին՝ ի վեր տապալելու կը ջանան. շահամոլութեան հնարք։ Ձեն գիտեր խեղճերը թէ՝ որ բանին որ առջևը արդելք դրուի և անոր յառաջադիմութեան առջև թումբեր կանգնուի՝ այն բանը միշտ յառաջ ընթանալով՝ փառաւորապէս բարձր ի գլուխ կը պանծայ.....։

Հիւրը՝ Ազգերու հակառակ, Յառաջադիմութիւն և Լուսաւորութեան հնարքները և միջոցները անհպելի ընելու կաշխատին։ Ազգը հոգեվարքի տագնապներու մէջ կը տապալի, իրենց հոգը չէ. Ազգը՝ իր հիւանդութեան համար դարման կազդակէ՝ աղեկտուր և սրտատոչոր ձայնիւ, այս անխիղճ և անզգայ մարդոց վրայ ազդեցութիւն մի անգամ չըներ։ Ազգին այս դառնագէտ վիճակին մի միայն դարման մատակարարող և հոգի ու կենդանութիւն տուող Սահմանադրութիւնը պիտի լինի. իսկ ասոնք Սատանայական խնդրոյներով՝ Սահմանադրութեան յուզարկաւորութիւնը ընելու կը պատրաստուին։

Ասոնք՝ ի՞նչպէս որ գիտանք, ա՛յնպէս եբլանք, ըսելով, Ազգին՝ իր ազգութեան խաւարին մէջ խարխաբիլը և անոր յառաջադէմ և լուսաւորեալ չլինելը կուզեն, որովհետև մեր հայրերը և նախորդները լուսաւորեալ և յառաջադէմ չէին և այն բաները ըսած չունէին, կըսեն։ Ընմիտներ, ըսէ՛ մէկը իրենց, միթէ ասկէ 500—1000 տարիներ յառաջ մեր նախնեաց օրովը, Հայ Ազգը լուսաւորեալ ազգաց կարգը չէ՞ր. Հայ ազգը միթէ չունէ՞ր իր կանոնաւոր Ազգային վարչութիւնը (ինչպէս հիմայ նորէն ունեցաւ). Հայ Ազգը միթէ չունէ՞ր իր Գրականութեան Ոսկեդարը, Հայ Ազգը միթէ չունէ՞ր այն ժամանակ իր դպրոցները, վարժարանները, կրթարանները և այլն։ Միթէ Հայ Ազգն ալ քաղաքակիրթ չէ՞ր և չունէ՞ր....։ Միթէ Հայը՝ ինչպէս որ մեր աչքովը կը տեսնենք հիմայ, յառաջներն ալ այսպէս ցրուեալ, անտերունչ, ընկճեալ, տեղազայ և այլն էր.... Վիճ մի մտածեցէք, զուք ո՛ Հիւրեր, էն գը-ինե՛ր, մտածեցէք, քննեցէք ձեր սիրտերը և խիղճերը, փնտռեցէք Ազգասիրութեան վեհ զգացումը ձեր սրտերու խորշերուն մէջ, և այն ժամանակ, առանց տարակուսի ինքզինքնիդ բոլորովին փոխուած պիտի գտնէք, եթէ կատարեալ մարդ էք։

Հին գաղափարի տէրերը՝ Սահմանադրութեան հակառակ գործելով՝ Ազգին մեծապէս կը վնասեն, և Ազգային Յառաջադիմութեան խիստ մեծ արգելք եղած կը լինին։ Ազգին մէջ անհոգութեան, անտարբերութեան և թմբրութեան սերմեր սերմանելու եռանդ կը լինին։

19. — Եթէ մանուկ լինի կին մի՝ յանցանքը իւր երկանն է, որովհետև հոգ չտարած է նա տանը դրամական կացութիւնը անոր իմացնելու:

20. — Եթէ կինը տան ամեն բանը իմանալէ ետքն ալ իւր հագուիլ կապուելուն և հաճութեանցը համար մսխած ստակը սահման չունենայ, այն ժամանակ երկան պարտքն է ընտանեաց գլխաւորի վայել իշխանութիւնը ձեռք առնուլ, այս անկարգութեան տեղի չտալու համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԻԱՄ ՍԹՈՒԱՐԹԵԱՆ ԹԱԳՈՒՀԻԻՆ ՅԱՒԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Շարունակութիւն և վերջ (1).

Այս բաները Եղիսաբէթ թագուհւոյն ականջը հասնելով և զանոնք աւելի ևս մեծցնելով՝ Մարիամայ մահը արտորցնել կը ջանար:

Մասնաւորապէս այս բանիս համար քառասուն և երկու մեծամեծներ և հինգ թագաւորական դատաւորներ որոշուեցան Մարիամ թագուհին քննելու և դատաստանական վճիռը տալու համար. բայց ամեն քննութիւն անկանոն և վերիվերոյ եղաւ, սուտ գրութիւններ ցուցցին իբրև իրեն ձեռագիրը. իւր գրագիրներուն վկայութիւնները իրեն դէմ բերին, բայց առանց իրարու հետ բաղդատելու:

Այսպիսի ապօրինաւոր քննութեամբ, Եղիսաբէթ թագուհին վճիռ տուաւ, որ Մարիամ թագուհին, իւր մօրաքեռ աղջիկը, մահապարտ է. Եղիսաբէթին դէմ վրէժխնդիր ըլլալու համար շատ մեղերէ օգնութիւն կանչող ամբաստանելով:

Երբոր Մարիամ Սթուարթեան իւր մահուան վճիռը լսեց, զարմանալի քաջասրտութեամբ մի ըսաւ. "Այն մահը, որ իմ այսչափ տարուան քաշածներուս վերջ պիտի տայ, իմ ուզած բանս է. այն հոգին՝ որ այս անցաւոր աշխարհիս մէջ իւր մարմնովը միշտ բարեբաղդութեան և յաջողութեան մէջ կ'ապրի, անարժան է, երկնային երջանկութեան":

Բանտին մէջէն հետևեալ նամակը Եղիսաբէթին գրեց, որն որ իրեն հեզ, անյիշաչար և քրիստոնէավայել բնաւորութիւն ունենալը կը ցուցընէ.

" Տիկին,

Թէպէտև ձեր ձեռօք կնքեալ վճռով մը մահուան դատապարտուած եմ, բայց մի կարծէք որ ձեզի թշնամի պիտի մեռնիմ. Իմ կրօնքս ինծի բոլոր աշխարհային ցաւոց և դժբաղդութեանց համբերել կը սորվեցընէ, ինչպէս որ ձերինը անպատիժ զանոնք գործելու թոյլ կուտայ: Թէպէտև իբր յանցաւոր և ոճրագործ դատապարտուեցայ, բայց սակայն անմեղ եմ: Ես ձեր կենաց իբր դաւաճան գործող անձ պիտի չդատուիմ, հապա այնպիսի թագ մը կրելուս համար, որուն պատճառաւ դուք կը հալէիք ու կը մաշէիք: Այն հաւատքը՝ որն որ Սրբոյն Պօղոսի աղօթել տուաւ Ներոնի համար, կը յորդորէ զՄարիամ Սթուարթեան՝ Եղիսաբէթի համար աղօթելու: Թող այս՝ օրինաւոր կերպիւ թագուհի չեղած անձ մի արժանի չէ ծննդական իրաւամբ գահ նստած թագուհւոյ սրտմտութեան:

Անշուշտ եմ որ այս խօսքերս զձեզ պիտի զայրացընեն, բայց արդէն մահուան դատապարտուած եմ, ի՞նչ բան զիս պիտի կարենայ վախցընել: Իմ տանջանքը, զոր նախատական կը համարիք, իմ փառքս պիտի լրացընէ: Մի կարծէք բնաւ որ զիս սպանելով անպատուհաս պիտի մնաք, յիշեցէք որ իբրև զիս պիտի դատուիք: Այսու ամենայնիւ շատ հեռու եմ իմ մահուանս վրէժը առնուելու փափաքելէն, այն ժամանակ միայն շատ երջանիկ պիտի համարիմ անձս երբոր իմ ժամանակաւոր մահս, որն որ քիչ օրէն պիտի ունենամ ձեր հոգին ու միտքը լուսաւորէր և զձեզ յաւիտենական կենաց առաջնորդէր: Մնաք բարեաւ, Տիկին, հաւատացէք ինծի. թագը շատ վտանգաւոր բան է, ձեր մօրաքեռ աղջկան կեանքը արժեց:

Մարիամ Սթուարթեան":

Այս նամակը գրելէն և առ Եղիսաբէթ յղելէն յետոյ, սկսաւ աղօթել, և բարեգործութիւններ ընել կարօտելոց: Երեք մեծ իշխաններու աղաչեց որ իւր մահուան ժամանակ ներկայ գտնուին, և ականատես ըլլին իրեն գլխատութեան: Ասոնցմէ մին չուզեց ներկայ գտնուիլ: Մարիամ այն ժամանակ այս ցաւալի խօսքը զըրուցեց լալագին. "Ես, ըսաւ հառաչելով, քու թագուհւոյդ ազգականն եմ. ես, Հենրի Է. թագաւորին արիւնէն եմ. ես, Փռանսայի թագուհի եղայ, Սկովտիոյ թագուհի պսակուեցայ, այսպիսի անձի մը գլուխը պիտի կտրուի, չտեսնուած անսնել մի պիտի ըլլի, ինչպէս չեն ուզեր անոր ա-

(1) Տես թիւ 11, երես 84.

Ճակտին վերայ քանդակելով վատ անուն
Օ՜էն ամբառնայ ընկերաց դէմ անպատկառ
Ուաղ մոլած երկրիս փառաց անկայուն։

Սուրբ հաւատոյ այս յաղթանակ ով մարդիկք
Մոռնէ սուր ձեր անոր սրտին խորանուխ,
Հոսի անորժ անա արիւն այս դաշտին մէջ.
Երևամոլ կեշտին ջնջուի մառախուղ։

Երիտասարդ թէ մոռնինք այս դաշտին մէջ
Գանծայ պիտի Քրիստոսական սուրբ հաւատք
Ներկինք բնաւ զձեզ անվարձ չեն թողուր
Ի մեր գլուխ հիւսի պիտի սուրբ պսակ։

Օ՜ն Հայկազունք վառուին հրով ձեր հոգիք
Թինդրես առեալ մոռնենք մարտին ասպարէզ
Զայն սիրելեաց հնչեն մեզի Ներկինքէն
Թէ Հաւատոյ է այս փառաց սուրբ հանդէս։

Հապ՜օն ուրեմն արի արանց Հայկազունք
Տապաստ յերկիր կործանեցէք թշնամին,
Թէոր յաղթենք՝ մեր Հայրենեաց եմք պարծանք
Թէոր մեռնինք՝ վարձք անհամար ի Ներկին։

Ղ. Ս. Ղ.



ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ Ի ՉԱՄԻՒՕՆԻՔ

Ամիսէ մը 'ի վեր Քաղաքիս Մեսրոպեան ազգային վարժարանին տարեկան հարցաքննութիւնը մանրամասնաբար և խիստ անաչառութեամբ տեղի ունեցաւ, Ուսումնական խորհրդոյ մեծարգոյ և ազգասէր անդամոց և ուսումնական և ուսումնասէր Յարգելեաց ներկայութեանը։ Ուսումնական խորհրդոյ բարեջան անդամները՝ իրենց անխոնջ աշխատութեամբը՝ կարող եղան միամսեայ միջոցին մէջ ընդհանուր հարցաքննութեան Տեղեկագիրը շինել և հրատարակել, որուն մէջէն ընթերցողք ըստ բաւականի կիմանան վարժարանին ներկայ կացութիւնը։

Կը լսենք որ վարժարանիս Առաջին Դասարանին Առաջին և Երկրորդ դասերու աշակերտներէն շատերը Հայկազանութեան և ուսմանց ու գիտութեանց մէջ զոհացուցիչ պատասխաններ չկրցեր են տալ հարցաքննութեան ժամանակ, որն որ իրենց Դասատուին պատիւ չբերեր....։

Յուլիս 22 Կիրակի ցերեկն ալ Պարզևաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ. որուն սկիզբ տուաւ Ուսումնական խորհրդոյն կողմանէ պատրաստուած Հայերէն ատենաբանութիւն մի, աշակերտաց կողմանէ ալ հեզհեակ Տաճկերէն, Յունարէն, Անգլիարէն Ճառեր և Հայերէն ու Յունարէն թատերգութիւնք ներկայացուցեան։ Երբեմն Եւրոպական երաժշտութեան եղանակները և ազգային հայրենասիրական երգերը վարժարանին ընդարձակ պարտէզը կը թնդացընէին, որուն մէջ կը կատարուէր սոյն այս հանդէսը, ուր ներկայ էին Քաղաքիս ընդհանուր Կառավարը և ուրիշ Օսմանցի երևելիներ, Սրբազան Առաջնորդը, Ազգին մեծամեծները, ուսումնականները, վերջապէս խուռն բազմութիւն մի հասարակութեան։ Ճշմարիտը խօսելու համար՝ կըսենք թէ նոյն օրը նիւթական կարգադրութեան մասին պակասութիւններ տեղի ունեցան։ և շատերը իրենց դժգոհութիւնը յայտնեցին։ Բայց ինչ և է մենք դալձեալ կը փութանք մեր շնորհակալութիւնը հրապարակաւ ևս յայտնել Ուսումնական խորհրդոյն, որուն զբաղուած տարած գործերը և աշխատութիւնները անուրանալի են։

ՄԱՆԻՍԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԴԻՊԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՐԼԷՔԸ ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ուրախ սրտիւ կը կարդանք քաղցրաբոյր Օրագրի մէջ որ Մանիսայի Երիտասարդութեան սրտին մէջ ընթերցասիրութեան և ազգասիրութեան հուրը արծարծելով՝ երկու Ընկերութեանց (Դպրոցական և Ընթերցասիրաց) սէր եղեր են. և կը փութան լուսաւորուելու համար ամէն ջանք ընել։ Կը գովենք իրենց եռանդը և կը բարեմաղթենք որ իրենց այս ազգասէր և Աստուածահաճոյ ընթացքը շարունակեն, սիրով և փութեամբ. ինչու որ սէրը և փութիւնը շատ դժուարութիւններու կը յաղթեն և միշտ կը փառաւորուին։

Երաժշտական այս գործոյն նիւթ եղող երգերը են, Ա. Օրհնութիւնք ըստ ութ ձայնից, Բ. Շարական զգեստու Պատարագին, Գ. Եկեղեցական Տաղ մը, Դ. Շարական Ս. Աստուածածնի, Ե. Շարական Յարութեան, Զ. Շարական Սրբոց վարդանանց, Է. Աղօթք Տէրունական, և Ը. Երգ Գոհաբանութեան (1)։

— "Նոր Եօրքի Ինքնիշխան լրագրոյն մէջ հետևեալը կարդալով՝ հաճութեամբ կը հաղորդեմք մերազնեայց"։

"Արժան կը համարիմք յիշել, թէ Տօքթօր Սերոբեան քանի մը տարի յառաջ տեսակ մը ներկ հնարեց գրամատուղներու համար, որով անոնց կեղծը շինել անհնար կը լինէր։

Այժմ կը լսեմք թէ Օսմանեան սէրութիւնը այս անձին յանձներ է Հնոյէֆի թղթոց շինութիւնը ամնական հաղար լիրայ վարձով։

"Տօքթօր Սերոբեան Կ. Պոլսեցի Հայ մըն է, որ իւր ուսմունքը Ամերիկայի Եէյլ դպրոցին մէջ ըրաւ և բնալուծական գիտութեանց մէջ շատ յառաջադիմեց։ Իւր դասատուին քով, որ է Պ. Սիլմէն, շատ Հայեր ուսանելով մեր բանասիրութեան և զանազան գիտութեանց մէջ լաւ յառաջացան, և ապա իրենց հայրենիքը վերադարձան՝ ուր սիրեն սորված գիտութիւններին իրենց քրիստոնեայ և մահմէտական հայրենակցացը մէջ։

Ուրիշ Հայ մը նաև, Պ. Օսկանեան, որ նոյնպէս Ամերիկայ ըրաւ իւր ուսմունքը և այժմ հոս կը բնակի, Կ. Պոլսոյ մէջ առաջին օրագիրը հաստատեց։

Հոս եկող բազմաթիւ Հայերը բժշկութեան, մեքենականութեան և այլ զանազան արհեստից պարապեցան և փառաւոր վկայականներ առնելով դարձան իրենց հայրենիքը, որով մեր զանազան արհեստները Կ. Պոլիս մտաւ։ Անոնց ընկերներէն ոմանք տակաւին հոս իրենց ուսմունքը կը շարունակեն, և ոմանք ալ մեր բանակներուն մէջ բժշկութիւն կընեն։ Ասկէց կը հասկցուի թէ Ամերիկայի գիտութիւնքը և հասարակապետական ըսկզբունքները կը տարածին կոր Տաճկաստանի Հայ ժողովրդոյ մէջ, որ ուսման և յառաջադիմութեան խիստ ցանկացող են, և հիմայ ալ կը ցուցնեն թէ քաղաքական և կրօնական ազատութեան յարգը ճանչել սկսեր են, որով Տաճկաստանի բարգաւաճութեան ամենէն յարմար ժողովուրդը կըլլան"։

Արժանապատիւ Կ. Վ. Շահնազարեան, փարիզ պատուական լրագրոյն միջոցաւ հրատարակած Դաշանց Թղթոյ Ընտրութեան մասին մեր բազմաթիւ ազգայնոց թախանձանացը գիջանելով՝ առանձին ալ, ապագրելու բարեհաճեր է. վրան յաւելցնելով նաև Դաշանց Թղթոյն օրինակը և Սրբազան Կաթողիկոսին տուած հաստատութիւնը, որով ընթերցողն այս խնդրոյն վերայ ամենայն պարզայիւք կատարեալ կը տեղեկանայ։ Կը վաճառի Պոլսոյ հայ գրավաճառաց քով, և ի Զմիւռնիա Արշալոյս գրասենեակը, գինն է 3 ֆր. ճանապարհի ծախքով հանդերձ։

Այս պատուական գիրքը ամեն ճշմարիտ Հայ ունենալ պարտ է . . .։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՄԻԼԼԷԹԻՆԻ ՍԼՈՎ

Անցածները Տէտէեան տպարանէն այս անուն ազգասիրական ոգիով գրուած տետրակ մի ելաւ, որուն Մեծարգոյ Հեղինակն է ճշմարիտ ազգասէր և Հայրենասէր Յ. Ս. Քիւրքճիանօֆ, որ ի Հալէպ։ Այս արժանայարգ Անձը Ազգին սիրով վառեալ գրած է սոյն տետրակը և իւր Ազգին մէջ ձրի բաժանուիլ որոշած է. Գովելի ազգասիրութիւն։ Կը փափաքէինք որ Ազգին մէջ վերոյիշեալ Մեծարգոյ անձին հետևողները բազմանային։

ՀԱՐԱԳԻՐ–ՏՆՕՐԷՆ
ԳՐ. Գ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

ՕՄԻԻՈՆԻՈ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՏԷԵԱՆ

---

(1) Այս առթիւ մեր կողմանէ վերջին գիտութիւն մի կընենք. շնորհը շատ պատուական և շատ գեղեցիկ պիտի լինի. եթէ մեր սքանչելի շարականները Եւրոպական երաժշտութեան համաձայնեցնելով մեր Եկեղեցիներուն մէջ երգեհնի ընկերութեամբ երգուին . . . .։

Ծ. Գարնան